բոսի անձը և կը լռէ նորա անունը։ Պետրոսի գործը տակաւին աւարտուած չէ։ Նա պիտի աշխատի մինչեւ իւրնահատակութեան վերջին և բեղմնաւոր հանդէսը։ Բայց քարոզութեան առաջին մղումն զկնի՝ Պետրոսի դերը նոյն չէ։ Նա իրաւ և լուութեամբ կը հրաժարի այն առաջնութենէն, զոր առ ժամանակ մի կը վարէր։ Հին Հռովմայ դիւթասարսռեցուն նման նա կը դառնայ դէպ ի աւրորը։ Այս այսուհետեւ, եթէ փափագինք առաւելութիւն մի կամ աւագութիւն մի փնտռել Պետրոսին վրայ, ուրիշ բան չենք գտներ, բայց միայն հեզութիւն և խոնարհութիւն. Ո՞վ կարող է կարդալ և կամ ո՞վ կարդացած է երբէք Պետրոսի թղթերը, առանց նշմարելու նորա հեզահամբոյր և խոնարհ հոգին։ Բայէք նորա թղթերը և կարդացէք։ Ո՞ւր է այն անհամբեր և խրոխտ Սիմոնը, որ կը հարկանէ քահանայապետի ծառան։ Մաթ. Ի.Զ. 51։ Ո՞ւր է այն յանձնապաստան Սիմոնը, որ կը համարձակի ասել իւր վարդապետին. «Թէպէտ և ամենեքեան գայթակղեսցին ի քէն, սակայն ես ոչ գայթակղեցայց.» Մաթ. Ի.Զ. 33։ Ո՞ւր է այն յանդուգն Սիմոնը, որ Յիսուսի տնօրէնութեան կատարմանը դիմադրելով և նորա հետ կագելով կ'աղաղակէր. «Հաւ լիցի քեզ տէր, մի եղիցի քեզ այդ։» Սիմոն ոչ եւս է, և ոչ երեւի տեղն նորա։ Բայց ո՞ւր է նմանապէս այն Սիմոնը որ կ'ուրանար իւր Տէրը և Վարդապետը։ Զը կայ այս Սիմոնը իւր թղթերուն մէջ, անհետացած և չքացած է նա, ոչ միայն Փրկչի առջեւ, այլ և նոցա առջեւ, զորս ի պատերազմ կ'առաջնորդէր խաւարի դէմ։ Սիմոնը փոխուած է ի զգօն, քաղցր, մարդասէր և հեզահամբոյր ծառայ Յիսուսծոյ և մարդկան։ Սիմոն դարձած է հրաշալի տիպար խոնարհութեան և ամբծութեան։

Ընդ այս ամենը յառաջ բերելէն զկնի՝ շարունակենք այժմ ամեն կողմեն պարզել խնդիրը և ակներեւ ցոյց տալ աւետարանական Ճշմարտութեց այն փրկարար արդիւնքը, զոր մարդիկ կարող են քաղել ուղիղ մեկնելով և հասկնալով Յիսուսծոյ խօսքը։

(Շարունակելի։)

ՍՈՒՐԲ ՏԵՂԵԱՑ ԽՆԴԻՐԸ

(Շարունակութիւն, տես թիւ 2։)

«Նոյն շնորհքը կորսնցուցած չեմ համարեր, ըստ Պ. Հիւպատոսը, քանի որ դուք առատասիրտ էք և նեղողամիտ Հայր. դարձեալ պիտի շնորհէք նոյն արտօնութիւնն, որոյ վասն դեռ ես իմ յոյսս կտրած չեմ, և կը թախանձեմ և պիտի թախանձեմ որ ընդունիք սոյն խնդիրս, և թոյլատրէք Լատինաց գալ իւրեանց պատարագը ընել դարձեալ, և ես ինչպէս փոքր մի յառաջ ալ ասացի, պէտք եղածները պիտի ըսեմ և պիտի պատուիրեմ, որ այսուհետեւ երբէք ձեր իրաւունքին չդպչին, և նզբանոր սոփորութիւններ չհասատանեն և զձեզ չվշտացնեն։»

Այս աւելցուց Պ. Հիւպատոսն ըսելով թէ, «Ինչ պատուական եկեղեցի ունիք եղեր, ասոր նմանը չտեսայ Երուսաղէմի մէջ, իրաւ որ կ'արժէ։ Ուրեմն Սրբազան Հայր, երջանիկ էք դուք և ձեր ազգը, որ Սուրբ Երուսաղէմի մէջ, պատուական Պատրիարքարան մի ունենալէ յետոյ՝ այսպէս

digitised by A.R.A.R.@

հոյակապ և փառաւոր եկեղեցի ալ ունինք։ —

«Նոյն այն 'ի վերայ լերինն Սիօնի» ըսաւ Արքայազն Պատրիարքն։ —

«Մեծ երջանկութիւն է այս ձեզ համար, կրկնեց Պ. Հիւպատոսը. Սուրբ Երուսաղէմի մէջ, և այն ալ Սիօն լերան վրայ այսպէս ընդարձակ և հոյակապ վանք ունենալը, սակայն պարտաւոր էք նաև այլոց խնդրանաց ևս զիջանել, որ անոնք ալ մասնակցելով մխիթարուին։ —

«Ուրիշ ազգեր զանազան բարեմասնութիւններով երջանկացեալ են, ըսաւ Արքայազն Պատրիարքը դարձեալ, իրենց ձեռքը գտնուած տեղերով և վայելած բարիքներով. մի՞ թէ քիչ տեղ ունին Լատինք և Յոյնք իրենց ձեռքը. թող այն անհամար եկամուտները, որ գետօրէն կը վազեն կուգան Եւրոպայի բոլոր Թագաւորաց և համայն ժողովրդոց կողմանէ, և իրենք երբեմն զմեզ նախատելով կը յոխորտան ըսելով թէ, «Մենք Եւրոպիոյ եօթը տէրութեանց կողմէն կը նստինք հոս.» և երբեմն ալ դատ վարելու ատեն անոնց ազդեցութիւնը մէջ բերելով կըսեն՝ եօթն տէրութեանց սեպհականութիւն է, և այլն. այսքան բարիքներ ունեցող, և զայն կշտապինդ վայելող միաբանութիւն մը, խեղճ Հայոց միաբանութեանը, որք տարուց տարի եկած ուխտաւորաց փոքր գումարովն աղքատօրէն ապրելով շնորհիւ բարեխնամ Օսմանեան Տէրութեան օրինաւոր հրովարտակներովը սեփհականուած այս միակ մխիթարութեան մէջ անգամ մասնակցիլ երազելովնին՝ ո՞ր ատեն մեղանչում կը սեպուի Պ. Հիւպատոս, մտածեցէք կ՚աղաչեմ. եթէ մենք այս մեր փոքր վայելքէն անոնց մասն հանել պարտաւոր ենք ըստ իւրեանց կարծեաց. արդեօք իրենք իրենց անհամար բարութեանց զոր կը վայելեն կշտապինդ, որքան պարտաւոր են մեզ ևս մասն և բաժին հանելու, ըստ տէրունական անսուտ բանին թէ՝ «Որում շատ տուաւ՝ շատ խնդրեսցի 'ի նմանէ» ևն. Այսպէս խօսքերով ողջմտեալ զմիմեանս բաժնուեցան ամենայն սիրով խօսք տալով Պ. Հիւպատոսին թէ, յատուկ ուրիշ օր մը պիտի գայ։

Պարծեալ սուրբ Յակոբեայ Ընդրոյն վրայօք Յունաց վանուց մէջ եղած խօսակցութիւն (Մորաֆայ), որ ներկայ էին Վսեմ. Վալէ փաշայն, Վսեմ. Մէնիֆ էֆէնտին և Դամասկոսի Պաղչէոյ Պ. Հիւպատոսը՝ 'ի կողմանէ Լատին կրօնաւորաց։

Զկնի սովորական տեսութեան հարցուց Վսեմ. Մէնիֆ էֆէնտին Ս. Պատրիարքին թէ, «Յերեկեան օր մենք ուրիշ գործեր ունեցանք և փոքր ինչ շրջագայելու տեղեր ալ գնացինք. 'ի հարկէ դուք աւելի օգտակար գործերու պարապած պիտի ըլլաք։ —

«Էֆէնտիմ, ըսաւ Արքայազն Պատրիարքը, մեր գործերը արդէն ինքնին յայտնի են, որ նախ մեր Օգոստափառ Սուլթանին անդին կենաց երկարութեան, և նորա բոլոր ձեռնարկած բարի գործերուն յաջողութեան, և զինի բոլոր աշխարհի խաղաղութեան և Թագաւորաց հաշտութեան համար աղօթել է միշտ, և ապա շնորհիւ մեր մեծազօր Թագաւորին ձեռքերնիս գտնուած վանօրէից վրայ հսկել, և դարձեալ մեր բարեխնամ Տէրութեանն և համայն Ազգիս փառք և պատիւ բերող և հայրենեաց օգտակար գործերուն աւելի հոգ տանել է, ինչպէս վարժատան, տպարանի և

digitised by A.R.A.R.@

Թանգարանի. և այլ այսպիսի օգտակար հաստատութեանց, ինչպէս որ անցեալները թէ Վսեմ. Վալի փաշայն և յետոյ Ձեր Վսեմութիւնը անձամբ այցելութեան գալով՝ ականատես եղաք, որոյ վասն մեծապէս շնորհակալութիւնս կը մատուցանեմ թէ իմ համօրէն ազգիս և թէ բոլոր միաբանութեանս կողմանէ Ձեր Վսեմութեան։ Ահա ասոնք են մեր պաշտօնին պարտաւորութիւնը և պարապմունքները։»

«Բայց յերեկեան օր, կրկնեց Ս. Պատրիարքը, մինչ մենք կը պատրաստէինք մեր բարեկամ Պ. Ժիւպատոսի բարի գալուստը շնորհաւորելու երթալու, ինքն կանխեց մեր վանքը եկաւ և բաւական միջոց ալ տեսնուեցանք, և երկար խօսակցելու առարկաներ ունեցանք, եւ գուցէ Պ. Ժիւպատոսը ձանձրացած ալ պիտի ըլլայ, որոյ վասն ներում կը խնդրեմ նորին յարգութենէն։ —

«Ինչ ըսել, ոչ թէ միայն չձանձրացայ, ըսաւ Պ. Ժիւպատոսն, այլ և մեծապէս շնորհակալ եւս եմ որ մեծ մարդասիրութեամբ ընդունեցիք ընդ մեզ, և յանձն առիք մեր չգիտցածները մեզի պատմելով տեղեկացնելու, և այն՝ օրինաւոր փաստերով և վկայութեամբ։ Եթէ ժամանակս ներէ, միտք ունիմ դարձեալ գալու, և ձեր վանուց բոլոր հաստատութիւններն պտըտելու և աչքէ անցընելու զանոնք՝ եթէ կը բարեհաճիք. և մանաւանդ կը լսեմ որ օրինաւոր վարժարան, տպարան և Թանգարան ալ ունիք եղեր վանուցդ մէջ. նաեւ դուք անձամբ քանի մի գեղարուեստներ ալ գիտէք եղեր, որոնք ինձ ալ սիրելի են, և կ'ուզեմ անոնց փորձերը տեսնել»։

Այս կէտերուն վրայ Վսեմ. Վալի փաշայն և Վսեմ. Մինիֆ էֆէնտին բաւական գոհունակութեամբ ակեան խօսիլ Պ. Ժիւպատոսին հետ, և իրենց այցելութեան օրը տեսածները համարեա թէ մի ըստ միոջէ պատմեցին, թէ նոյն հաստատութիւնները աչքէ անցընելնին, և թէ Թանգարանի Այցելուաց համար յատկացեալ տումարին մէջ իրենց Վսեմ. անուննին ստորագրելնին մէջ բերելով, ևն, ևն, ևն.

Ըսաւ Ս. Պատրիարքն. «Հա՛տ փոքր բաներ են, Պ. Ժիւպատոս, մեր ունեցածները Ձեր տեսածներուն և ունեցածներնուդ հետ բաղդատելով. բայց դուք քանի որ կը բարեհաճիք գալ, հրամեցէք երբ որ կը կամիք, մեծ պատիւ կը համարեմ ինձ համար։ Վսեմ. Վալի փաշայն և Մինիֆ էֆէնտին ըսին. «Ըոթրիք էֆէնտի, կ'երեւի որ Պ. Ժիւպատոսին հետ պատորագելու խնդիրը կամ լուծած էք և կամ դիւրացուցած, քանի որ ըստ ձեր խօսման բաւական երկար տեսութիւն ըրած ըլլալով, ի հարկէ գործը դիւրացուցած պիտի ըլլաք. եթէ այդպէս բան մը եղած է, շատ գոհ պիտի ըլլանք։ —

«Ոչ թէ միայն չդիւրացաւ, ըսաւ Ս. Պատրիարքն, այլ և աւելի անկարելութեան կերպարանք առաւ իմ յառաջ բերած հաստատ փաստերովս, զորս Պ. Ժիւպատոսին մի ըստ միոջէ պատմեցի ամենայն պարագայիւք և վկայութեամբ. ի հարկէ այսքան իմ բռնաբարեալ իրաւունքներս տեսնալէ զկնի, վերստին զիս չպիտի կրնայ ստիպել, և կամ աղաչել նոյն շնորհքը դարձեալ շարունակելու։ —

«Շնորհքը միշտ շնորհք է, ըսաւ Պ. Ժիւպատոսը, զոր շնորհընկալը միշտ շնորհողէն կը թախանձէ մինչեւ կարողանալ զայն կրկին ձեռք բերելու,

digitised by A.R.A.R.@

որ և լսէ կերպիւ. —

«Երբ ապերախտութեամբ շարժի շնորհընկալը, պատասխանեց Ս. Պատրիարքը, և վայելած շնորհքը չարաչար գործածելով իբրև իրաւունքի տէր կարծելով զինքն՝ պաշտօնական կերպարանք տալ ճգնի, և միանգամայն նոյն շնորհքը ընողին իսկ սեփհականութեան արդար իրաւունքին դըպչի, այն ատեն զիա՞րդ կարելի կ'ըլլայ, Պ. Հիւպատոս, նոյն շնորհքը դարձեալ շարունակելու թոյլատրել այն 'ի կորուստ Միաբանութեան ազգային արդար սեփհականութեանս.

«Նա մանաւանդ, արդէն յայտնի կ'երևի որ՝ զուտ կրօնական եղած խնդրոյն քաղաքականի կերպարանք տալ կ'երազեն. այս խնդիրը բոլորովին կրօնական է, և իմ տէրութիւնս և բոլոր տէրութիւնք կրօնական գլուխներուն յանձնած են իրենց կրօնքը ազատօրէն պաշտելու. ինչպէս Ֆրանչիսկեանք իրենց կրօնական անսխալ Պապն ունին, նմանապէս ամենայն ազգ. նոյնպէս և Հայոց ազգը ունի կրօնական կառավարութեան գլուխ իր Պապը, այսինքն սուրբ Էջմիածնայ սրբազան Կաթողիկոսն ամենայն Հայոց, (բայց ոչ անսխալ.) որ վասն 'ի հարկէ իմ կրօնական Գլուխս ալ ինձմէն կրօնական հաշիւ կը պահանջէ. և արդէն իսկ ծանուցած էր ինձ՝ (մինչ Հռովմայի Պապին անսխալութիւնն հաստատելու համար տիեզերական ժողով կազմելու հրաւէր կը կարդար, և ըսելէայն բոլոր Հայ Եպիսկոպոսաց հրաւիրագրեր կը խրկէր առանց խորհրդակցելու անոնց Գլխուն հետ.) թէ ահա Հռովմայի Պապը կ'աշխատի զինքն անսխալ հրատարակել՝ ինքն սխալական և մահկանացու գոլով հակառակ հեզութի և խոնարհութիւն քարոզող Յիսուսի Քրիստոսի աւետարանական վարդապետութեան. զգուշացէք ուրեմն 'ի խմորոյ անտի անսխալութեան, և ըզգուշացուցէք զորս ընդ ձեզ են, և այլն և այլն.

«Թող իմ կրօնական գլուխս սրբազան Կաթողիկոս գրած և պատուիրած չըլլայ, և ոչ ալ զգուշացուցած, ես պարտաւոր չե՞մ միթէ իմ պարտքս ճանաչել, որ արդէն իսկ իմ պաշտօնս ալ է և պարտաւորութիւնս, զգուշանալ յամենայն հակառակ վարդապետութենէ, որք ո՛չ համաձայնին հոգւոյն՝ սրբոյ Աւետարանին, և այս իսկ իմ ուխտս ալ է առաջի անսխալ և անմահին Աստուծոյ և առաջի ամենայն ազգիս Հայոց. ուրեմն զիա՞րդ կարեմ և իմ սուրբ ուխտիս հակառակ, իմ կրօնքս նախատող, այպանող, և իմ սուրբ Եկեղեցւոյս մէջ անգամ իմ սուրբ զեկեղեցիս և ազգս հերձուած և հերետիկոս քարոզող կրօնաւորներուն դարձեալ թոյլատրել, որ իմ մեծազօր Տէրութեանս շնորհիւ ինձ 'ի բնէ անտի սեպհական իրաւունքս եղած սուրբ եկեղեցւոյս մէջ այդպէս ոճիր գործուին աչացս առջեւ եւ ականջէս 'ի վար. միթէ արդարութիւն չմնա՞ց աշխարհիս վրայ. և միթէ տէր և տիրական չը մնա՞ց Հայոց Ազգին. քա՛ւ լիցի, դեռ իմ մեծազօր Տէրութիւնս կարող և հաստատուն կանգնեալ կայ ամենայն կարողութեամբ և կարգադրութեամբ, գիտէ և կարող իսկ է զրկելոյն իրաւունքը զրկողին ժանիքներէն թափել, և իւր իսկ սեպհական տիրոջը յանձնելով ասել թէ երթ, ազատ պաշտէ քու կրօնքդ, ոչ ոք կրնայ զքեզ արգիլել կամ անարգել. Ու դուք Վսեմ. Տեա՛րք իմ, եթէ չէք կրնար իմ դատս որոշել և զիս այսպէս անիրաւ բռնաբարողնե-

digitised by A.R.A.R.@

բուն ձեռքէն աղատել, կ'աղաչեմ ա-
սայէք ինձ, և ես անձամբ կ'երթամ
կը ներկայանամ իմ ողորմած և արդա-
բադատ վեհափառ Թագաւորիս, և
կը խնդրեմ Նորին Վեհափառութե-
նէն գոնէ. եթէ տէրտիմէ տէրման,
եթէ գաթլիմէ ֆէրման։

"Մինթէ իմ վեհափառ Թագաւորս
կուզէ՞ իւր հաւատարիմ հպատակաց
իրաւունքին կորսուելը կամ բռնա-
բարուիլը, մանաւանդ այսպիսի լու-
սաւորեալ դարուս մէջ. քա՜ լեսի։—

"Ասթրիք տօսթուտուզ, ասաց Ը-
սեմ. Այն Փաշայն իւր բնական ազ-
նիւ և համեղ բնաւորութեամբն, մի
վշտանար և սիրտդ հանդարտ պահէ,
երբէք քու իրաւունքդ չկորսուիր.
և ոչ մէկը կրնայ քու իրաւունքդ քու
ձեռքէդ յափշտակել. "Այէի շահա-
նէտէ." բայց քանի որ դատ կը վա-
րուի, 'ի հարկէ երկու կողմէն ալ
պէտք եղածը պիտի խօսիք, և մենք
ալ պարտաւորուած ենք լսել. Նայե-
ցէք մէկ անգամ, այս գործերուն
համար տէրութեան կողմէն յատկա-
պէս խրկուած է Վսեմ. Մինիֆ է-
ֆէնտին. Նմանապէս և ես հրաման
նաւ Նորին Վեհափառութեան եկած
եմ աստ, այնքան գործերս ձգելով
'ի Դամասկոս, 'ի հարկէ այս հրաման-
ները մեզ ընող բարեհնամ Տէրու-
թիւնը ոչ ձեր և ոչ ուրիշ որ և իցէ
հպատակաց իրաւունքին կորսուիլը
չուզեր. ուրեմն մի վշտանար. կրօնքդ
ազատ է, և Տէրութիւնը քու կրօն-
քիդ և կրօնական կարգերուդ և կա-
նոններուդ երբէք չը խառնուիր, ա-
զատ թողած է. ուրեմն առանց վըշ-
տանալու իրաւունքդ յառաջ բերե-
լով խօսէ, մենք և Պ. Հիւպատոսը
սիրով կը լսենք. և ոչ Պ. Հիւպատո-
սը կ'ուզէ ձեր սեպհական իրաւուն-
քին բռնաբարուիլը. միայն մեր և
Պ. Հիւպատոսին խնդիրը այս է որ՝
քանի որ դուք այսքան տարեներն
նորհքը ըրած էք, և Լատինք վայե-
լած են զայն, եւ մօտ տարիներս
ձեր սիրտը որ և իցէ կերպիւ վշտա-
ցուցեր են, նոյն վիշտերուն համե-
միչ դեղեր դնելով բժշկելէ մեր աշ-
խատութիւնը. և այն ձեր յօժար կա-
մքը և ամենայն սիրով նոյն շնորհքը
դարձեալ Լատինաց թոյլատրելիդ
կ'ուզենք, որք վայելել սկսին. բայց
այսու ամենայնիւ ինչպէս քանիցս ան-
գամ խօսուած է, դարձեալ կը խոս-
տանամք մենք և Պ. Հիւպատոսը՝ որ
սաստիկ պատուէր կը տրուի Լատի-
նաց, որ երբէք նորանոր շարժումներ
և սովորութիւններ չընեն. ոչ թէ
միայն այս մասին, այլ ձեր բոլոր ի-
րաւանց վրայ երբէք ակնարկութիւն
անգամ չընեն. և եթէ դարձեալ այնպէս
շարժումներ ընել սկսին, դուք իրա-
ւունք ունենաք իսկոյն հերքել և ոչ
երբէք ընդունել. մանաւանդ որ այս-
քան կ'աշխատուի, մեր աշխատու-
թիւնն ալ 'ի դերեւ չելլայ։—

"Այս իմ վեհափառ Թագաւորէս
շնորհակալ եմ, և ինձմով բոլոր Հա-
յոց ազգս, ըսաւ Սրբազան Պատրիար-
քն, որ իւր հպատակ ծառայներուն
իրաւանց կորսուիլը և անոնց բռնա-
բարուիլը երբէք չուզելով հրամայեց
թէ Ձեր Վսեմութեանը և թէ Վ-
սեմ. Մինիֆ էֆէնտիին հոս խրկը-
ուիլը, այր վասն Ձեր Վսեմութենէն
եւս շնորհակալ եմ։

"Այդ՝ քանի որ իմ վեհափառ Թա-
գաւորս իմ կրօնքս ազատ թողած է,
և իմ վանորայքս ինձ յանձնած է իւր
բարձր հրովարտակովը՝ գիտութեամբ
համայն Այգիս Հայոց, իմ կրօնքիս
վրայ երբէք նախատինք չեմ կրնար ըն-
դունիլ. և իմ սեպհական վանորէից
մէջ, յորս ես անսխալ և անմահ Այ-

digitised by A.R.A.R.@

տուծոյ երկիրպագանեմ և զնա միայն կը պաշտեմ, չեմ թողուր և ոչ զոք պաշտօն կատարել, որ իմ կրօնքս կ'այ. պանէ, կը նախատէ, հրապարակա. կան անէծք կը կարդայ, հերձուա. ծող և հերետիկոս անուանելով զայն։ Խովսրականին գալով կ'ըսեմ, ես իրա. ւունքի և մալի տէր եմ, կ'ուզեմ կ'ընդունիմ կ'ուզեմ չեմ ընդունիր։ Շնորհք մի է. այսքան ատեն է ըրած եմ. այսօր չեմ ըներ։ Աղերմութիւն մի է, այսօր կուտամ. վաղը չեմ տար։ Ձեր Վսեմութեան Պ. Հիւպատոսին ուզած շնորհքը մանաւանդ թէ իմ անձնական սեպհականութիւնս չէ, այլ շնորհիւ մեծազօր տէրութեանս համայն Հայոց Ազգին սեպհակա. նութիւնն է, նուաստս Տէրութեան շնորհած հրովարտակին համաձայն պահպանող երեսփոխան մի եմ, ուս. տի չեմ կրնար երբէք այնպէս յայտ. նի թշնամին դարձեալ իմ տունս հը. բաւիրել 'ի ցաւ, 'ի տրտմութիւն և 'ի գայթակղութիւն համայն Ազգիս և 'ի նախատինս իմ կրօնքիս։

«Այլ դուք Վսեմափայլ Տէրք, հանդերձ Պ. Հիւպատոսով կը խընդ. բէք և կը յորդորէք զիս որ՝ զիջանիմ ձեր հրամանին և թոյլատրեմ խնդրեմ իմ անձնական ծառայութենէս հրա. մայեցէք պատրաստ եմ կարելի եղա. ծը ընել, թէ և իմ անձիս անգամ բայարձակ տէրը ես չեմ, այլ իմ համայն ազգս է, վասն զի անոր նը. ւիրած եմ եկեղեցական եղած օրէս 'ի վեր. սրեմն այսքան պարտաւորու. թեանց դէմ, ես ինչպէս կրնամ մե. զանչել, մանաւանդ թէ նոյն մեզան. չելն անգամ իմ ձեռքս չէ։

«Կը մնայ այժմ զմեզ վստահացու. ցած կէտին պատասխանել, որ կ'ը. սէք թէ՝ «մենք Հատինաց սաստիկ պատուէր կուտամք որ՝ նորանոր սո. վորութիւններ չը հնարեն և ձեր բ. բաւանց վրայ ակնարկ անգամ չը ձը. գեն, ևն ևն ևն։

«Կ'ընդունիմ Ձեր Վսեմութեան անգին խօսքերը. նաեւ Պ. Հիւպատո. սին, ճշմարիտ կ'ըսէք և այն յօգուտ մեզ, զնոյնն յանձն կ'առնուն նաեւ Ֆրանչիսկեան կրօնաւորք, և ամենայն վստահութեամբ խօսք ալ կուտան եր. բէք չմեղանչել. վասն զի նոցա բնա. ւորութիւնն է վերջին աստիճան զի. ջանիլ, աղաչել, պաղատել, խոնար. հել, ծունր կրկնել ամենայնիւ, մին. չեւ իրենց ուզածը ձեռք բերեն. ան. կէ յետոյ քիչ մը ատեն ալ ամենայն սիրով կ'երթան մինչեւ վստահացնեն. այլ երբ իրեն գործիքները կարգի կը դնեն և նպատակին հասնելու կէտին կը բերեն, ալ անկէ զկնի նոցա բե. բանը ուրիշ խօսք չը գտնուիր այլ մի. այն նօ, նօ, նօ։ Լօ, կ'ըսեն. բէյղամ պէր չեն ըսեր. իմ ազգային իրաւուն. քը՝ս կը կորսուի եղեր. կը վնասուի, կը բռնաբարուի եղեր, որոնց հոգն է. իրենք արդէն անսխալ Պապայով մի. աբանութիւն մի են, և մնացեալ քը. րիստոնեայք, որոց մէջ եմք և մեք Հայքս, հերձուած, հերետիկոս և դժոխոց զաւակ տիտղոսով պակուած իրենցմէ միշտ. մեր խօսքը կ'ըլլայ այն ատեն, վասն զի միանգամայն բոլոր Հրուսաղէմի և ամենայն շրջակայից նորա իրենք են տէր ըստ իւրեանց կարծեաց, ուր կը մնայ խեղճ Հայոց ազգը իւր Պատրիարքովն հանդերձ։

«Վսեմափայլ Տէրք իմ, նուաստս եթէ ուրիշ վանքի կամ քաղաքի միա. բանութենէ Պատրիարք ըլլայի ընտ. րուած, այս խօսակցութիւններէ, ա. ղաչանքներէ եւ ստիպումներէ 'ի հարկէ պիտի զիջանէի և համաձուէի թոյլատրել Հատինաց դալ պատարա. գել. այլ բարեբաղդաբար 'ի բնէ մի.

digitised by A.R.A.R.@

տեան եմ, և ահա սուրբ Յակոբեայ վանուց այս 27 տարի է որ այն վանուցս մէջ կը սպասաւորեմ, և ամէն ժամանակ անոնց արարքները աչքիս դիմացն են. թէ անոնց և թէ ուրիշ ազգաց վրայ տեղեկութիւններ ուրիշներէն հարցնելու կարօտութիւն չունիմ. ուրեմն այսքան լիովին տեղեկութիւն ունենալովս և անոնց արարքները ականատես իմ վկայութեամբս մի ըստ միոջէ գիտնալովս, զի՞նչ կարելի է անոնց խոնարհութեան հնազանդութէ և խօսքերնուն խաբուիլ. որք սուտ է բոլորովին. Այլ միանգամայն իմ սեփհականելու իրաւունքիս համար յայտնի թակարդ մի է. Կ'անցնի այս օրս, այս տարիս կամ միւսն եւս խաղաղութեամբ, և կը պատահի ապագայ ժամանակին այնպէս երբ իմ իրաւունքներս բռնաբարել սկսին, այն ատեն ո՞ւր պիտի գտնեմ Ձեր Վսեմութիւնը և Պ. Հիւպատոսը որ՝ ըսեմ. ահա Լատինք Ձեր Անձուութեան տուած խօսքերնին հակառակը սկսան գործել. դուք ձեզէն դատ արարէք ըստ ձեր հաւատարիմ խոստմանդ, և այլն.

«Բաւ լիցի Տեարք իմ, որ իմ ձեռօքս այս աղէտքը թէ Ս. Աթոռոյս և թէ ընդհանուր Հայոց Ազգիս գըլխուն բերելու պատճառ ըլլամ, այդ սոփրասութեան չեմ կրնար ձեռնամուխ ըլլալ. մանաւանդ թէ Ձեր Վսեմութեան պատուական անուան կը խնայեմ ապագային մէջ. զի որուն հետեւութիւնն շատ ծանր ապագայ մը պատրաստել ըսել է ամենայն կերպիւ Ձեր հլու հպատակ Հայոց ազգին համար, քանի որ այս խնդիրը որ զուտ կրօնական է երթալով երթալով քաղաքական կերպարանք առնելով Հայոց Ազգին միակ մխիթարութեան միացած սեփհականութէ իրաւունքին սաստիկ հարուած պիտի պատճառէ, և նոյն հարուածէն առաջին վէրք մը անբուժելի, զոր բժշկելու համար ճարտար և ամենաճարտար բժշկի պէտս պիտի ունենամք՝ եթէ կարողանամք երբէք գտանել. Ուստի Տեարք իմ, խնդրեմ մի եւս ստէպ զիս այդպիսի աղէտից սկզբնապատճառ ըլլալու. ինձ համար ահա օր յարմար և ահա ժամանակ փրկութեան. և այս է իմ խօսքիս սկիզբն և վերջն, այսինքն ո՛չ երբէք կրնամ ընդունել Լատինաց գալը պատարագ մատուցանելը իմ սեփհական սուրբ Եկեղեցիիս մէջ, որ միայն Հայոց ազգին սեփհական ստացուածքն է.

Դարձեալ վերջացաւ ժողովին առանց որոշ վճիռ ինչ տալու.

(Շարունակելի)

ԼՈՅՍ ԵՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ

(Շարունակութիւն՝ և վերջ. տես Թիւ 2.)

Յետնահատակութեան Մարդանանց, կըհոլովին դարեր, կըսահին տարիներ, կը յաջորդեն խաւար դարեր և տարիներ, յորս ամբողջ Հայաստան գրեթէ տգիտութեան շնորհիւ կը լողայ արեան և աղետից ծովու մը մէջ.

Այս դարուց մէջ կ'ունենայ Հայաստան արիւնռուշտ վատ Բուղաներ, ազգադաւ և Հայ մատնիչներ, որոնցմէ լոյսը՝ սակալով կը փախչի և լերանց խորշերու և ծերպերու մէջ կ'երթայ ապաստանիլ. լեռներու գագաթներ յանկարծ լուսարաններ կը հաստատուին (1). լուսով բորբոքեալ վառվառուն էակներ հանդիպելով կ'ուխ

(1) Լուսարան ըսելով վանք պէտք է իմանալ.

digitised by A.R.A.R.@